

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից 2014 թվականի 9 ամիսների ընթացքում կատարված աշխատանքների մասին

Ամփոփվել են ՀՀ մարզերում տեսչական ստուգումների անցկացման ժամանակացույցի համաձայն 2013թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Արարատի մարզում իրականացված ստուգումների արդյունքները:

Ստուգումների արդյունքում արձանագրված խախտումների համար կայացվել է տեսչության պետի որոշումը՝ Արարատի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին, հողային պետական տեսչության պետին կարգապահական տույժի, իսկ Արտաշատ, Մասիս և Այնթապ համայնքների ղեկավարներին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

Մարզում արձանագրված որոշ խախտումներին իրավական գնահատական տալու նպատակով ստուգման նյութերն ուղարկվել են Արարատի մարզային դատախազություն:

Ըստ հաստատված ժամանակացույցի 2014 թվականի ապրիլ-սեպտեմբեր ամիսների ընթացքում ստուգումներ են իրականացվել Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու և Արագածոտնի մարզերում:

**ՀՀ Արմավիրի մարզ**– Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 6 համայնքներում:

Համաձայն մարզպետի 10.06.2014թ. N 01/11/1944-14 գրության, կայացվել են որոշումներ 5 համայնքների ղեկավարներին ընդհանուր **750000** դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

**ՀՀ Գեղարքունիքի մարզ**– Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 4 համայնքներում:

Ուսումնասիրության արդյունքում կազմված ակտը ներկայացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետին, որի արդյունքում երեք համայնքների համապատասխան պաշտոնատար անձիք ենթարկվել են վարչական պատասխանատվության (ընդհանուր **400.000** ՀՀ դրամի չափով):

**ՀՀ Կոտայքի մարզ**– Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 6 համայնքներում:

Ուսումնասիրության արդյունքում կազմված ակտը ներկայացվել է ՀՀ Կոտայքի մարզպետին: Ստուգման ակտով արձանագրված թույլ տրված վարչական պատասխանատվություն առաջացնող խախտումների արդյունքում վարչական տույժի ընդհանուր գումարը կազմում է **1300000** ՀՀ դրամ:

**ՀՀ Լոռու մարզ**– Ուսումնասիրություններ են իրականացվել մարզի 14 համայնքներում:

Ուսումնասիրության արդյունքում կազմված ակտը ներկայացվել է ՀՀ Լոռու մարզպետին: Ստուգման ակտով արձանագրված թույլ տրված վարչական պատասխանատվություն առաջացնող խախտումների արդյունքում վարչական տույժի ընդհանուր գումարը կազմում է **5100000** ՀՀ դրամ:

**ՀՀ Արագածոտնի մարզ**– Ավարտվել է համայնքներում ուսումնասիրությունների հետ կապված աշխատանքները:

Ներկայումս կատարվում են ուսումնասիրության արդյունքների ամփոփման աշխատանքներ:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2013 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 399-Լ հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն, 2014 թվականի 9 ամիսների ընթացքում տեսչության կողմից կոմիտեի աշխատակազմի՝ Երևանի տարածքային, Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի և Լոռու մարզային

ստորաժամանումներում իրականացվել են հերթապահ կադաստրային քարտեզների վարման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ:

Երևանի տարածքային, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի և Լոռու մարզային ստորաբաժանումներում իրականացրած ստուգումների ժամանակ հայտնաբերվել են մի շարք թերություններ, արդյունքում կազմված տեղեկանքները ներկայացվել են մարզային ստորաբաժանումների ղեկավարների քննարկմանը: Արագածոտնի մարզային ստորաբաժանումում իրականացված ստուգման արդյունքները գտնվում են քննարկման փուլում: Ստորաբաժանումների ղեկավարները գրություններով հայտնել են, որ տեղեկանքներում արձանագրված թերությունները իրենց կողմից ընդունվել են, արձանագրված թերությունները ամբողջությամբ վերացվել են և բոլոր աշխատակիցների ուշադրությունն է հրավիրվել դրանք հետագայում բացառելու համար:

Նշված թերությունների վերաբերյալ տեղեկանքները և ստորաբաժանումների ղեկավարների կողմից թերությունները վերացնելու մասին գրությունները հրամանի պահանջների համաձայն զեկուցագրերով ներկայացվել են կոմիտեի նախագահին:

Թերությունների վերացման վերաբերյալ ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացված գրությունների համաձայն, կադաստրային քարտեզներում հայտնաբերված թերությունների վերացման արդյունավետության նպատակով տեսչության կողմից իրականացվել է կոմիտեի աշխատակազմի Կոտայքի, Շիրակի և Լոռու մարզային ստորաբաժանումներ այցելություններ արձանագրված թերությունների վերացման ուսումնասիրության նպատակով, որի արդյունքները զեկուցագրով ներկայացվել է կոմիտեի նախագահին:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 29 նոյեմբերի 2013թ. թիվ 398-Լ հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն, 2014 թվականի 9 ամիսների ընթացքում տեսչության կողմից տեսչական ստուգումներ են իրականացվել Երևանի քաղաքապետարանի

ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունում և ՀՀ մշակույթի նախարարության համակարգում գտնվող «Պատմամշակույթային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ում առկա քարտեզագրագեոդեզիական նյութերի ու տվյալների հաշվառման, պահպանման, օգտագործման և տրամադրման նկատմամբ, որի արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել:

Իրականացված ստուգումների արդյունքում նշանակված վարչական տույժերից պետական բյուջե է մուտքագրվել **2150000** դրամ: